

ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆԻ ԵՎ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ
ԱՌՆԶՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վ. Մ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հովհաննես Հովհաննիսյանը բարձր է գնահատել Ղ. Աղայանի գրական վաստակն ու անհատականությունը: 1888 թ. նամակներից մեկում բանաստեղծը երախտագիտության զգացումով գրում էր իր ավագ գրչակցին. «Թեպետ Ձեղ անձամբ ծանոթ լինելու բախտը չունիմ, բայց ես միշտ հարգել եմ Ձեր տաղանդը և, չգարմանք, Ձեր անվան, կամ ավելի լավ՝ Ձեր «Արություն և Մանվելի» հետ է կապված իմ առաջին գրականական տպավորությունը»¹:

Հովհաննիսյանն առաջին անգամ նամակ է գրել Ղ. Աղայանին 1884 թ. դեկտեմբերի 12-ին: Այդ ժամանակ Մոսկվայի համալսարանի հայ ուսանողները ստեղծել էին գրական ընկերություն, որի նպատակներից մեկը մանկական գրքեր հրատարակելն էր: Նշված թվականին լույս է տեսնում ընկերության առաջին գրքույկը՝ «Զորս առակ» խորագրով: Այստեղ ընդգրկված է երեք թարգմանություն, երկուսը՝ Լաբուից («Մոման կատուն», «Կապույտ կրակում»), մեկը՝ Շարլ Պերոյից («Կախարդ Նանայթ») և Հովհաննիսյանի մշակած «Փինաչին» ժողովրդական զրույցը: Ընկերության որոշումով տպագրված գրքերը պետք է ձրի տարածվեին հայկական դպրոցներում: Այդ նպատակով Հովհ. Հովհաննիսյանը որպես ընկերության քարտուղար գրել է. «Մեծապատիվ պարոն Ղազարոս Աղայանց, ընկերությունս ուղարկելով Ձեզ 30 օրինակ «Զորս առակ», պատիվ ունի խնդրելու Ձեզ տարածել այդ գրքույկները Ձեր թեմայում, երկու-երկու օրինակ ընկերությանս կողմից Ձեր խնամքը հանձնած դպրոցներին» (2, 4, 10):

Մանկավարժ և մանկագիր Ղ. Աղայանը շատ լավ գիտեր աճող սերնդին հասցնագրված գրքերի բարերար նշանակությունը ուսուցման, մտավոր զարգացման և դաստիարակության գործում: Մտանալով գրքերը, Ղ. Աղայանը Հովհաննիսյանին գրել է. «Իմ խորին շնորհակալությունը հայտնելով՝ կմաղթեմ, որ աստված զորացնե Հայրենասեր Ընկերության ջանքն ու եռանդը ու բեղմնավոր կացուցանե նորա ցանած բարի սերմերը մանուկ սերնդի մտավոր անդամության մեջ»²: Ցավոք, Աղայանի ցանկությունը չիրականացավ: Ընկերությունն աստիճանաբար զրկվեց նյութական միջոցներից և հինգ գիրք հրատարակելուց հետո մեկընդմիջ տաղարեցրեց տպագրական գործը: Հինգերորդ գիրքը Հովհ. Հովհաննիսյանի «Բանաստեղծությունների» անդրանիկ ժողովածուն էր, որ լույս տեսավ 1887 թ. հուլիսին: Բանաստեղծը ժամանակի ճանաչված գրողների՝ Ղ. Ալիշանի, Պ. Պոռչյանի, Բաֆթու, Գ. Սունդուկյանի, Ղ. Աղայանի կարծիքը իմանալու մտահոգությամբ, նրանց ուղարկում է գրքույկը՝ իր ընծայականով: Այդ առիթով Ղ. Աղայանը Հովհաննիսյանին գրել է. «Ստացա Ձեր պատվական բանաստեղծությունները իբր նվեր Ձեր կողմից: Ձեր գիրքը ձեռք բեռք եմ ձգել և ուշ հասցրել ինձ. ընդունեցեք, խնդրում եմ, իմ առ ի սրտե շնորհավորությունս Ձեր ուշադրության և անկեղծ նվերի համար»³: Ղ. Աղայանը, որ ուշադիր հետևում էր գրականու-

¹ Հովհ. Հովհաննիսյան, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1968, էջ 271 (այսուհետև մեջբերումների հատորն ու էջը՝ բնագրում (կամ տեքստում)):

² Գրականության և արվեստի թանգարան, Ղ. Աղայանի ֆոնդ, № 150:

³ Ղ. Աղայան, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1963, էջ 163 (այսուհետև մեջբերումների հատորն ու էջը՝ բնագրում (կամ տեքստում)):

թյան իրենթացքին, դառնում է այդ գրքի առաջին քննադատը։ Այդ ժամանակ Աղայանը փոխարինում էր «Աղբյուրի» խմբագիր Տիգրան Նազարյանին. և Աղայանը-քննադատը լույս է տեսնում ամսագրում (1887, № 10)։ Աղայան-քննադատը Հովհաննիսյանի ժողովածուն դիտարկում է մի քանի տեսանկյունից։ Նախ՝ ներկայացնում է Հովհաննիսյանի հանդես գալու պատմական ժամանակաշրջանը, հայ պոեզիայի վիճակը, նշում մեր գրականության մեջ քաղաքական պոեզիայի հիմնադրին՝ Մ. Նալբանդյանին, այնուհետև անդրադառնում Ռ. Պատկանյանին և Ս. Շահազիզին, նկատելով, որ 70—80-ական թվականներին հայ պոեզիայում մի պահ լուռություն տիրեց. Գամառ-Քաթիպայի քնարի «թելերը այլևս Արաքսի ալիքների պես չգարիվ-դարիվ չէին խփում լալազին»։ Այլ կարծես բարկացած դեղձում էին անաղուն ջրաղացի նման...» (Ա, 3, 127)։ Իսկ Ք. Ա. Եղբ. դուրս եկավ պ. Շահազիզյանի «էկոնի վիշտը» և սառն ընդունելության հանդիպեցավ ուսանողների կողմից, նա ևս բռնեց և երկար ժամանակ մենք մի բանաստեղծ չունեցանք (ն. տ.)»։ Այս իրողությունը Աղայան-քննադատը բացատրում է ոչ միայն հայկական կյանքով, որ «մենք այլևս տաղանդներ չունինք» կամ «եղածները դեռ չծաղկած» արդեն թառամեցան, որովհետև արևելահայ գրականությունը այդ շրջանում լինելով «ոռուսաց դրականության ամենահյուս հպատակը, նրա մտերիմ արքաները, ըստ ամենայնի ենթարկվեցավ նրա ազդեցության»։ Մինչդեռ այդ ժամանակահատվածի ոռուս գրականությունը «դժվար կապանքներից աղափած» մի տեսակ նանձարձակություն ստացավ և սկսեց դարերով սրբացած բաներ, ոտնատակ տալ, — տաղանդը շինեցին կաղամբ, հանձարը՝ բանջար»։ Ե մոգայից ընդան Պուշկինը, Լերմոնտովը, Ժուկովսկին և այլք։ Ուսանողությունը այլևս բանաստեղծություն չէր կարողում, և ոտանավորներ գրողների վրա ծիծաղում էին... Բայց բանը մինչև այնտեղ հասցրին, որ ճակատները պատին դիպավ և սկսեցին փոքր ի շատ խելքներ զլուխները հավաքել... Մինչդեռ ժամանակ կրթության խնդիրն առաջնակարգ տեղը բռնեց և բոլոր բանիմաց դաստիարակները ոչ միայն պաշտպան հանդիսացան բանաստեղծության, այլև քիչ առաջ մոռացված բանաստեղծներին վերականգնողություն տվին՝ նրանց համար հորելյաններ կատարելով և արձաններ կանգնեցնելով» (Ա, 3, 128)։

Չնայած Աղայանը պարզորոշ չի արտահայտում իր մտքերը, չի օգտագործում գրականագիտական հասկացություններ, սակայն ճիշտ է նկատում ոռուսական գրական կյանքում տեղի ունեցած իրադարձությունները։ Պատմական այդ ընդհանուր ֆոնի վրա նա ներկայացնում է Հովհ. Հովհաննիսյանի հայտնությունը հայկական Պառնասում. «Այսօր ահա մեր բանաստեղծությունն ևս վերականգնանում է ի ձեռն պ. Հովհաննես Հովհաննիսյանի և այն ուսանողությանը, որ մի ժամանակ սառն ընդունելություն ցույց տվավ վարժապետին (Ս. Շահազիզին—Վ. Վ.), այսօր օգնաբնայով է ընդունում նրա աշակերտին» (ն. տ.)։

Հովհաննիսյանին ճիշտ գնահատելու միտումով Աղայանը գրախոսականում անդրադառնում է նաև դրողի կոչման խնդրին։ Այս հարցում Աղայանը հպանցիկ հակադրվում է Բաֆթոնին, չհիշատակելով փխպասանի անունը։ Հայտնի է, որ «Կայծեր» վեպում Ասյանը ասում է. «Ժամանակները բանաստեղծի ձեռքին են», թե «նա գիտե անցյալը, գիտե ներկան և ապագան»։ Բերելով ոռուստիկ գրողի այս դատողությունները, ռեալիստ Աղայանը գտնում է, որ «ճիշտ չէ՝ ստեղծագործող անհատին հասարակական կյանքի վերափոխման պրոցեսում մեծ տեղ տալը. «Լավ բանաստեղծը յուր լեզվով, յուր ոգով, յուր երևակայությամբ մի ամբողջ ժողովուրդ է ժողովուրդը կփոխվի, կանհաանա»։ Բայց ճշմարիտ բանաստեղծի գրվածքը կմնա դարերով և կպատկերացնե անցած քնացած ժողովրդի հոգեկան և մտավոր աշխարհը։ Բանաստեղծը մի շատ համեստ մարդ է։ Նա յուր ժամանակի խալիսի նոքարն է, նրա թերությունները պախարակողը, նրա արժանավորությունների գովողը, նրա ցավին ցավակիցը-ուրախությունն ուրախակիցը։ Բանաստեղծը

ժողովրդի լինումն է, նրա սրտի հայտարարն ու թարգմանը: Վերջապես բանաստեղծը ժողովրդի ծնունդն է և ոչ ժողովրդը բանաստեղծի» (Ա, 3, 129):

Աղայան-քննադատը գեղագիտական այս սկզբունքներից ելնելով, գրտնում է, որ Հովհաննիսյանն իր անդրաձայն ժողովածուով նվաճում է գրողի կոչումը, քանի որ նրա «ոտանավորները ճշմարիտ բանաստեղծության դրույթ են՝ վերում իրենց վրա», և նրա շնորհիվ «այսօր ահա մեր բանաստեղծությունը ևս վերականգնանում է...» (ն. տ.): Ցավոք, Աղայանը իր գրախոսությունում չի բերում այն մի օրինակ բանաստեղծի բերած նոբարալությունից և թարգմանությունից, որովհետև վերջինի մասնաժողովը և խոհանրակցի ազդեցիկ արձագանքները:

Այնուհետև Աղայանին հետաքրքրում է երիտասարդ բանաստեղծի ապագան, «որտես ի կարողանա ձեռք բերել այն, որին նախորդները հասնել չկարողացան» (Ա, 3, 133—134), վերլուծելով Հովհաննիսյանի «Երկու ճանապարհ» բանաստեղծությունը: Վերջինս Հովհաննիսյանը գրել է 1883 թ. մարտի 1-ին՝ ճեմարանն ավարտելու նախօրեին: Լիբիլյան հերոսի առաջ երկու ուղի է բացվում: Նրանցից մեկը տանում է դեպի բախտավոր, նվաճական աշխարհ, ուր երկնքից օրհնած սիրտ դարձնում է միշտ ծագում և, որտեղ «նստեցնել կույսի վառ աչքերում» նա «դրամատիկ վայելչություն» էլի էր գտնի: Իսկ մյուս ճանապարհը՝ «տանում է փշուռ, տատանվում անապատ, ուր վարդ, լիովաններ չկան, ուր կյանքը մեռած, օդը լեռնաշղթա է... Պոետը դատաբարտում է առաջին ճանապարհը և իր որոշակի համակրանքը հայտնում երկրորդ ուղու նկատմամբ:

Բայց այնտեղ կյանքը շունի նպատակ

Բացի անձնական բարօրությունից,

Իսկ այստեղ գործի ասպարեզ արձակ,

Ազնիվ և վսեմ, թեև փշալից (Հ, 1, 1963, 16):

Սակայն Աղայանը մտավախություն ունի. հանկարծ երիտասարդ բանաստեղծը չի կարող իր ընտրած ճիշտ ուղին և գնա առաջին ճանապարհով: Նվաճականության խրախուսելու համար դիմում է դիցաբանությանը, բերում Հերկուլեսի և երեք եղբայրների օրինակները, որոնք ընտրել են դժվարագույն ճանապարհը և հաղթահարել բոլոր խոչընդոտները: Հոգևածի վերջում Աղայանը հույս է հայտնում. «Հովհաննիսյանը իբրև մեր բանաստեղծներից կրթոսեղանները պարտական է դժվարագույն ճանապարհը ընտրել... Թեղ Մասլաջ մուսափերը գործափիլ լինին նրան և թե տան՝ թեցնեն մինչև հակական Պառնասի գագաթը և մի ընդարձակ հորիզոն բաց անեն նրա բանաստեղծական հանճարի համար» (Ա, 3, 132—133):

Ղ. Աղայանը նկատում է նաև թերություններ՝ «բառերի դասաշարժության խրթնությունը, գրութային բուն ոճը, «և»-երի անտեղի և հաճախ դործածությունը, և բարոյական մեղամաղծությունը», այնուհետև եզրահանգում է. «Հովհաննիսյանի մեջ յուր վարժապետի (Ս. Շահադեգի—Վ. Վ.) թերություններն ավելի են աչքը ընկնում, քան նրա արժանիքը, որը դեռ պետք է վաստակել» (Ա, 3, 128): Քննադատն իր թվարկած դիտողությունները ապացուցելու նպատակով չի բերում համապատասխան օրինակներ: Լուկ հայտարարության տպավորություն է թողնում Աղայանի նաև հետևյալ դիտարկումը: Ելնելով այն ճշմարիտ պահանջից, որ հայրենական հողի վրա ստեղծած, ազգային բնավորություն ունեցող ստեղծագործությունները ավելի են քննադրվում և գեղարվեստական արժեք ունեն, քան օտարության մեջ ստեղծածը, որովհետև նման պարագայում («աղջիկն էլ է օտար, հավատն էլ, օտար և լեզուն») բուն ազգային բանաստեղծությունն աճել և զարգանալ կարող չէ, այլ կվերջանա մի քանի թախծալից հառաչանքով և որով՝ կհետաքրքրվի միայն «Օտարուհին» և կհարցնե՝ «Հե՞ր ես լալիս» (Ա, 3, 130): Այս պահանջը եղել է Ղ. Աղայանի գեղագիտական սկզբունքներից մեկը: Նույն չափանիշով նա գնահատել է 40-ական թվականների գրողներին՝ Խ. Աբովյան, Մ. Թա-

ղիադյան, Մ. Խրիմյան, Ղ. Ալիշան, Այսպես. մեծ լուսավորչի մասին նա գրել է. «Եթե Աբովյանը չլիներ Քանաքեռի ծնունդ, նրանց մեջ մեծացած, նրանց մեծ սնած, նրանց ցավով ցաված, նրանց ուրախության հետ ունեցած, ոչ մի Դորպատ նորան չէր կարող այդ անմահությունը պարգևել, այդ կրակոտ լեզուն նորա կրակոտ սրտին տալ» (Ա. Յ. 265): Այս նույնը անվերապահորեն կարելի է ասել նաև Հովհաննիսյանի պոեզիայի մասին, քանի որ նրա անդրանիկ ժողովածուում չկա ոչ մի ուրբանիստական բանաստեղծություն: Նա Մոսկվայում եղած ժամանակ միշտ ղդացել է իր ծննդավայրի կարոտը, իր հայրենակիցների վիշտն ու տառապանքը, սոցիալական շարիքը և նկարագրել նրանց թշվառության ու լացի աշխարհը («Կյուրի ժամր», «Հատիկ», «Աշուղ» և ուրիշներ):

Ղ. Աղայանի դրախտության դեմ հանդես եկավ Գ. Ենգիբարյանը՝ դրելով Հովհ. Հովհաննիսյանի «Բանաստեղծությունների» մի քննադատության առիթով: Նրա համոզմամբ ճիշտ չէ Աղայանը, որ Հովհաննիսյանին համարում է Ս. Շահագիրի աշակերտը, քանի որ նա «իսկ ինքնուրույն բնատուր ձևերը ցույց է տվել շատ բանաստեղծությունների մեջ», իսկ ինչ մեծ է «բարոյական մեղադրություն» խնդրին, Գ. Ենգիբարյանը այն համարում է ոչ թե բանաստեղծի հոգեկան ներաշխարհի արտահայտություն, այլ հետևանք «հասարակական կյանքի վիճակի, այլանդակ կյանքի ծանրության»: Եվ որպես ապացույց բերում է բանաստեղծի հետևյալ տողերը.

Այնտեղ, ուր արցունք, շղթա և ավեր,
Ուր լսվում է լուկ հառաչք լալագին,
Քո քնարիցը թող ուրախ ձայներ,
Ով թշվառ երգիչ, բռնավ լըլսվին... (2, 1, 88):

Այնուհետև անդրադառնալով բանաստեղծի լեզվի խնդրին, Ենգիբարյանը գտնում է, որ իրոք «նրա առաջին տարիներում գրած ոտանավորների մեջ թեև կարելի է նկատել մի փոքր նմանություն (СХОДСТВО), բայց ոչ նմանություն (ПОДРАЖАНИЕ)՝ պ. Շահագիրյանի գրածների հետ: Սակայն նա ճիշտ է ըմբռնել, որ մեր նոր լեզուն պիտի վերանորոգվի ավելի բարբառների հիման վրա, քան թե հին լեզվի ու ոճերի և դարձվածքների կազմությամբ: Եվ միայն «Աշուղը» բավական է, որ մենք ամենայն իրավամբ սպասենք նրանից զուտ ժողովրդական բովանդակությամբ և կենդանի լեզվով գրված պոեմներ և պատկերներ: Միանգամայն ուշագրավ դիտարկում: Իրոք, Հովհաննիսյանը առաջին հայ բանաստեղծն էր, որ հայ դրական լեզվին տվեց ժողովրդային ուղղություն՝ բանահյուսական նյութերի օգտագործմամբ լեզուն ազատելով հին ձևերից և գրական լեզվի հարստացումն ու զարգացումը կապելով բարբառներին:

Ղ. Աղայանը հանդես եկավ պատասխան խոսքով՝ «Պարոն Գ. Ենգիբարյանը» (Ա. Յ. 133): Այստեղ Ղ. Աղայանը Գ. Ենգիբարյանին հիշեցնում է. «Ես ասել եմ, որ բանաստեղծը յուր ժողովրդի և ժամանակի ծնունդ է: Իմ ասածը մի բացարձակ և հավիտենական ճշմարտություն է: Սորա մեջ են ամփոփված թե՛ Հոմերոս, թե՛ Շեքսպիր... Բայց դուք իմ ասածի մեջ տկուր ունեցել եք գտնում և ոչ շքեղազարդ իդեալիզմ, այդ նրանից է, որ դուք մոռացել եք ձեր միտը բերել, որ աշխարհիս երեսին առանց իդեալի ժողովրդի չկա, և ազգագրից, հասարակություն հասարակությունից և դասակարգը դասակարգի տարբերվում է նաև յուր իդեալով» (ն. տ.): Ղ. Աղայանը շատ լավ գիտակցում էր, որ իր գրախոսականով չի բացահայտել բանաստեղծ Հովհաննիսյանի էությունը, նրա պոեզիայի յուրահատկությունները: Այդ առիթով նա Հովհաննիսյանին գրել է. «Ավելի ընդարձակ կարող չէի գրել Ձեր բանաստեղծությունների մասին, որովհետև արդեն ստացել էի Ս. Մանդինյանցի

4 Արձագանք, 16. VII. 1887.

դրածի մի մասը⁵, պետք է այնպես գրեի, որ անհարմար չլինեի և նրա հոգի-վածի տպելը: Ես անցա հարեանցի... Ես հույս ունիմ, որ իմ գրվածքը (քըն-նադատություն) Ձեզ վրա այն տպավորությունը չի լինիլ ցործած, ինչ որ գործել է պ. Գարեգինի վրա» (4, 514—515): Իրոք, հետաքրքիր է, թե ինչպե՞ս ընդունեց բանաստեղծը այդ քննադատությունը: «Պետք է ճշմարիտը խոստո-վանիմ,—գրել է Հովհաննիսյանը Աղայանին,—որ Ձեր կարծիքը իմ մասին նպաստավոր չկարողացա համարել: Երբ որ երեխան մի շարություն է անում ու մեծերից մեկը վրան բարկանալով վշտացնում է նորան, մի ուրիշը մի կող-մից դառնում է վշտացնողին, թե՛ ի՞նչ ես վսեղճ երեխայի սիրտը կոտրում դատարկ բանի համար, իսկ մյուս կողմից լաց լինող երեխայի գլուխը շո-յելով, քաղցր ձայնով կրկնում է՝ իմ բալեն խելոք է, լաց չի լինի և այլն: Այս վերջին մխիթարության տպավորությունը գործեց ինձ վրա Ձեր հոգվածը, և այդ տեսակ մխիթարությունը, իմ կարծիքով, ավելի վերավորական է, քան բացարձակ անհանձար հռչակելը մի երիտասարդ հեղինակի, ինչպես արեց մեր լրագրողներից մեկը իմ վերաբերությամբ: Այնուամենայնիվ, հիմա ես ուրախությամբ «վարպետի ապտակի» տեղ եմ ընդունում Ձեր հոգվածը...» (2, 4, 30): Հովհաննիսյանը միաժամանակ Ղ. Աղայանին հայտնում է, որ ինքը գիտե, թե ինչպե՞ս են ընկալում պոեզիան ընդհանրապես: Այս հար-ցում բանաստեղծը ընդգծում է բանաստեղծության ըմբռնման սուբյեկտիվ կողմը: Իր միտքը ավելի պարզորոշ դարձնելու նպատակով գրել է. «Բա-նաստեղծությունը, ինչպես գեղարվեստը առհասարակ, մարդկային կյանքի, ներողություն, հասարակական կյանքի վերաբերությամբ՝ շատ նշանավոր ուսումնականների աչքում խիստ պայմանական նշանակություն ունի (մա-նավանդ մի տասնյակ տարի սորանից առաջ), ինչպես Ձեզ էլ շատ լավ հայտնի կլինի: Օրինակ, Սպինսերի պես մարդը բանաստեղծությանը վեր-ջին տեղ է տալիս մարդկային գործունեության այլևայլ ճյուղերի թվում: «Պարզ բան է, որ ես անձամբ երբեք չեմ կարող համաձայն լինել այս կար-ծիքին, թե հենց այն պատճառով, որ ինքս էլ թուղթ մրտադողներիցն եմ և թե այն հայացքի հիման վրա, որ ես ունիմ բանաստեղծի կոչման վերաբերու-թյամբ, որ կտեսնեք և իմ անշնորհք վայրահաշտությանց շատերի մեջ» (2, 4, 28): Այստեղ Հովհաննիսյանը նկատի ունի ժողովրդի կյանքը արտացոլող իր ստեղծագործությունները, որոնք բնութագրում են բանաստեղծի անհատա-կանությունը, ստեղծագործական ընդհանուր ուղին: Հավանաբար այդ կոա-հել էր նաև Ղ. Աղայանը, քանի որ Հովհաննիսյանին գրել է. «Ընթերցողին մի ճաշակ տալու համար քերել էի՝ ի միջի այլոց և «Աշուղը» ամբողջու-թյամբ. այդ բոլորը շնչեց ցենզորը» (2, 4, 514):

«Աշուղի» ընտրությունը պատահական չէր: Աղայանին հմայել էր բա-նաստեղծության ժողովրդայնության գաղափարը, ժողովրդի հոգու դրաման, մտքեր, որոնք հոգեհարազատ էին նաև իրեն: Քննադատի հաղորդած այդ լուրը ավելի է մխիթարում երիտասարդ բանաստեղծին՝ «ցենզորի դուրս ձգածը կարող էր ուրիշ կերպարանք տալ հոգվածին» (2, 4, 30): Հովհան-նիսյանը ինչքան ներողամիտ է գտնվում իր գրքի վերաբերյալ Ղ. Աղայանի արտահայտած մտքերին, նույնքան խիստ՝ Պետերբուրգի հայ ուսանողության հրատարակությունների առիթով գրած նրա գրախոսության նկատմամբ: 1887 թ. Մոսկվայի հայ ուսանողության կազմակերպած գրահրատարակա-կան ընկերությունը դադարեցրեց իր գործունեությունը՝ նյութական միջոցներ չունենալու պատճառով: Նույն թվականին Պետերբուրգի հայ ուսանողությու-նը շարունակեց այդ ազգանվեր գործը: Նրանք թարգմանաբար լույս ընծա-յեցին «Բուլղար ավազակապետ», «Ուրիշի գերեզմանի վրա առանց արտա-

⁵ Տե՛ս Ս ե գր ա կ Մ ա ն դ ի ն յ ա ն, Նոր բանաստեղծ (Աղբյուր, 1888, № 6, էջ 5—13, № 2, էջ 18—29):

⁶ Նկատի ունի «Մշակում» (1887, № 64) տպագրված Խ. Մալումյանի հոդվածը, որ Հով-հաննիսյանին համարում է Գամառ-Փաթիսյայի հետևող և նվաղ ինքնուրույն:

սուր են լաց լինում», «Նեղած», «Դանշո» և նման գրքուկներ ու տարածելիք Հայաստանում և հայաշատ գաղթօջախներում: Հրատարակիչների նպատակն էր, ինչպես նկատում է Լեոն, «...հեղափոխականացնել ժողովրդական մաս- սաները պատմական նմանությունների, անալոգիաների միջոցով: Ամենա- ցայտուն խրատական անալոգները տալիս է մեզ բուլղարական հեղափոխու- թյունը, որ թե շատ մոտիկ է մեզ ժամանակով և թե հարուստ թուրքահայե- րի կյանքը հիշեցնող պատկերներով: Հետևաբար թուրքահայերի ազատությու- նը կտրուկ է այն հեղափոխությունը, ինչ կերպով որ եղել է բուլղարների ազատու- թյունը⁷: Այդ նպատակով նրանք տպագրեցին բուլղար ճանաչված գրող Լյուբեն Եարավելովի վերը հիշատակված վիպակները: Աղայանը, ընթերցելով «արդ՝ թարգմանությունները, հուսով եմ, որ այս քննադատական հոգևածով» «Գրքուկը», — շոտ է Աղայանը «Ուրիշի գեղեցմանի վրա առանց արասուրք հն լաց լինում» վիպակի մասին, — հայտնի է, թե մի հեղինակությամբ է տարբեր, թե մի լրագրականություն կամ պոետիկություն: Հավանական է, որ հեղափոխություն լինի, բայց ճանաչում անհամ փոխադրություն է, որովհետև որոշ կերպ չի երևում, թե ի՞նչ կյանքից է առնված, արդյո՞ք բուլղարական, թե հայկական, թե՞ երկուսից միանգամայն» (Ա, 3, 135): Այստեղ Աղայանը հրատարակիչների «նշանակությունը դարձնում է թարգմանական արվեստի օրինակները: Կարգանման վրա և պահանջում հետևել ստեղծագործության անհատիկին՝ որոն, պատմական ճշմարտությանը: Փննադատը իրավացիորեն պահանջում է նշել հեղինակի և թարգմանչի անունը: Նա միաժամանակ ակ- նարկում է, որ տաճկահայերի սոցիալ-տնտեսական դրությունը ավելի դա- ժան է, քան նկարագրված է այդ ստեղծագործության մեջ: Նրանց գրքուկ- ների դադաճարական ընթանդակության վերաբերյալ Ղ. Աղայանը գրում է. «Ամեն մի ժողովուրդ մի վիճակից մյուսը անցնում է երկու միջոցով. բնա- կան կամ արհեստական, Մենք այդպիսի վիճակի մեջ ենք այսօր: Ուրում ենք ռուսից մի նոր հզանակ ածել, բայց թելերի մեջ ներդաշնակություն ձգել չենք կարողանում և ոչ էլ ընդունել այն: Այնինչ, «Մեկի քաղեր, որ մեզ գործողներին, առաջնորդներին, դաստիարակներին պակաս է, որ չլիս նաև ժողովուրդը: մեզ, այդ համայնության ոգին է, այդ ընկերական ոգին է, հասա- րակական ոգին է», հետևաբար, «Պետերբուրգի ուսանողության մտադրու- թյունն ու գործունեությունը ընդհիշողությունն է: «Դո՛ւն-Քիշորը չէր կարող անհամ զնացած արհեստությունը վերակենդանացնել: Նրա լիորձը տխուր ուղեղէ տեր մարդիկ կանեն, անմտությամբ ընկնելով սարգերի ռետախած որոգայթի մեջ: Ուստի «Մենք անհամաձիշի ենք մեր ուսանողներին գործ- նական այս ընթացքին» (Ա, 3, 143): Այստեղ ևս Ղ. Աղայանը օգտագործե- լով «սարգերի ռետախած» բառերը, նկատի ունի Բաժնիչուն, որը «Կայծեր» վե- պով հայ երիտասարդության համար տեսալեն է» նույն դադաճարը: Ղ. Աղայանը 80-ական թվականներին հայ ժողովրդի փրկությունը, ժամա- նակի ռոտո մտավորականների նման, տեսնում էր լուսավորության տարած- ման, մերկի շնորհվող բարեփոխումների, իսկ հետագայում՝ Անգլիայի օգ- նություն մեջ: Հովհաննիսյանը ծանոթանալով Ղ. Աղայանի այդ գրախոսու- թյունը, նրան օրել է. «Մենք այնպես ենք ընտելացել այդ մտքին, թե մեր փրկությունը ԱՅՆ տեղից է, որ դուրով չենք կարող ըմբռնել Ձեր հայտնած կարծիքներին մանրամասնությունները, ուր մենք թե համաձայնել նորա հետ: Առաջիկա կարող եմ հավատադնել իմ բարեբաղնությանը ասլուտի դար- կող վարդապետին, որ Ռուսաստանի երիտասարդության (ուսանողության) հա- մար նախկին ԽեղճԱՍՏԱԿՈՒԹՅԱՆ դարն անցել է. դժվար գտնվի մեղանում մի խելքը դիտի տոա, որ մի սև փողի նշանակություն տար Մարտիի, Մոն- պերիի գուցե և Թիֆլիսի լակոտների կամ լակոտամիտ պառոնների դավ- դակությունը: Ախարված համարեցեք Ձեզ էլ, խնդրում եմ, թե Պետերբուր- գի հրատարակչական ընկերության երիտասարդներին էլ գոցա շարքում եր

7 Լեոն, Անցյալից, Թիֆլիս, 1925, էջ 43:

դասում—ի նոցանե չեն: Ընդհանրապես այս պիտի ասեմ Ձեզ, որ մեզանում միաձուլ երիտասարդներն իրենց նպատակին անհամեմատ ավելի լուրջ են վերաբերվում, քան թե մինչև այժմ է եղել, իսկ շմաձուլները, ինչպես միշտ, միայն փափուկ կյանքի երազներով են ապրում, պատրաստվելով մեծամեծ սխրագործությանց ի փառս Բաքոսի (Հ. 4, 29):

Հովհ. Հովհաննիսյանը զայլընդունում և ցարմանում էր, որ հայ պահպանողականներն ու ազատամիտները հայ ժողովրդի փրկության գործում չունենին որոշակի, հստակ տեսակետ: Ահա թե ինչու նա ազատամիտ Ղ. Աղայանին գրել է. «Թող փորձված ալեգորի վարպետները համոզեն մեզ, որ ճանապարհը այս է և ոչ այն, և մենք հավատացած, որ նոցա ցույց տվածն ալեկի ճիշտ կերպով մեզ մեր նպատակին կհասցնեն, ճանապարհներս կփոխենք, սար ու ձոր կընկնենք, միայն թե իմանանք, որ Քանյան պիտի դուրս դանք» (Հ. 4, 29): Հովհաննիսյանը նկատի ունի 80-ական թվականների Մոսկվայի համալսարանի և Պետրովսկայա գյուղատնտեսական ակադեմիայի հայ ուսանողությանը կազմած «Հայրենասիրաց միություն» անկախ կազմակերպությունը՝ իր «Ազատության ավետաբեր» թերթով: Այդ կազմակերպության ակտիվ աշխատակիցներից է եղել բանաստեղծը: Այս էր պատճառը, որ նա հրապարակեց Պետերբուրգի հայ ուսանողության զաղափարներով և, ձայնակցելով նրանց, 1887 թ. փետրվարի 7-ին գրեց. «Տեսնում եմ ահա-ազգեր են մեռնում» բանաստեղծությունը:

Բայց, իմ հայրենիք, դու պիտի չմեռնիս.
Ես հավատում եմ հարության օրիդ.
Մոտ է ժամանակ, զարթիր, սիրելիս,
Փրկության աստղը վառվում է ճակտիդ:

Ոտքի ե՛լ, հոգի՛ս, շղթադ թոթափի՛ր,
Աչքըդ բաց արա՛, այդ մահվան քրնից,
Թեև մահամեծ, դու ձայն հանի՛ր—

Որդիքդ օգնության կըգան շորս կողմից (Հ. 1, 90—91):

Պետերբուրգի հայ ուսանողության հրատարակությունները ժամանակին հրապարակել են նաև Ալ. Մատուրյանին և Հովհ. Թումանյանին: Այսպես, 1913 թ. Թումանյանը դրում է «Խոշոր հայը» մահախոսականը՝ Բաքվի մարդասիրական ընկերության հրատարակչական գործի կազմակերպիչ Կոստան գինեատեսությանի մահվան առթիվ. «Իհեռ ուսանողական օրերից, ութսունական թվականների վերջերից հայտնվում է նա (Կ. Խատիսյանը—Վ. Վ.) իր ամբողջ բնավորությամբ: Ո՞վ չի հիշում էն ժամանակվա Պետերբուրգի ուսանողության տենդագին գործունեությունը և նրանց հրատարակությունները՝ «Դանշո», «Բուլղար ավաղակապետը», «Շամիլի դատաստանը» և նման հրատարակությունների էն շարքը, որ տասնյակ հազարներով ցրվում էին մեր հասարակության մեջ»:

Չնայած գեղագիտական և աշխարհայացքային որոշ հարցերում Ղ. Աղայանն ու Հովհ. Հովհաննիսյանն ունեին տարբեր կարծիքներ, սակայն նրանց փոխադարձ սերն ու հարգանքը հարատևեց: 1909 թ. Թիֆլիսում Ղ. Աղայանը, Ավ. Ահարոնյանը, Հովհ. Թումանյանը և Վրթ. Փափազյանը ծրագրել էին հրատարակել «Հայ գրողներ» վեճանագրով դասագիրք-ժողովածու: Ղ. Աղայանը 1909 թ. հունվարի 28-ին նամակով դիմում է բանաստեղծին՝ «մասնակցել իրենց ընկերական գեղեցիկ ձեռնարկությանը»: Բանաստեղծը սիրով մասնակցում է այդ նախաձեռնությանը և «Հայ գրողներ» ժողովածուի առաջին հատորում (1909) զետեղվում են Հովհաննիսյանի համառոտ կենսագրությունը, լուսանկարը և 19 բանաստեղծություն: Իսկ երկու տարի հետո բանաստեղծը պիտի հեռագրեր. «Ցնցված եմ Ղազարոսի հանկարծահաժմահով: Նրա ընտանիքին հայտնում եմ իմ խորին ցավակցությունը»:

ВЗАИМОСВЯЗИ Г. АГАЯНА И ОВ. ОВАННИСЯНА

В. М. ВАРДАНЫАН

Р е з ю м е

Г. Агаян и Ов. Ованнисян состояли в тесной переписке друг с другом. В этих письмах они обращались к разным проблемам армянской литературы, являясь единомышленниками во многих вопросах. Однако они по-разному оценивали издательскую деятельность петербургских армянских студентов в конце 80-х годов прошлого века. Ов. Ованнисян считал, что издание ими произведений болгарских писателей, имевших гражданское звучание, способствовало национально-освободительной борьбе армянского народа, в то время как Г. Агаян относился к их деятельности с умеренных позиций.